USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

Policy Brief
Համառոտագիր

Աջակցություն Հայաստան - Թուրքիա հարաբերությունների բարելավմանը

Support to Armenia - Turkey Rapprochement

This document is made possible by the generous support of the American People through the United States Agency for International Development (USAID). The contents of this document are the sole responsibility of the International Center fro Human Development and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.

Սույն համառոտագիրը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ. նրա բովանդակության համար պատասխանատու է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման իմանալի ուղիները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Ձևաչափի ճգնաժամը. փոսո՞ւմ, թե՞ փոսից դուրս

2010թ. երկրորդ կեսին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների շուրջ քաղաքական դրական զարգացումներ չեղան: Ավելին, Հայաստան-Թուրքիա արձանագրությունների վավերացման ներկա գործընթացի հնարավոր հաջողության վերաբերյալ թե՛ քաղաքական, թե՛ հասարակական գործիչներն ավելի ու ավելի հաճախ են հոռետեսական կարծիքներ բարձրաձայնում: Առավել հաճախ հնչում է այն կարծիքը, թե երկու երկրների իշխանությունները, հայտնվելով գալիք համապետական ընտրությունների հորձանուտում (Թուրքիայում՝ 2011թ. հունիսին, Հայաստանում՝ 2012-13թթ.) հարաբերությունների կարգավորման ուղղությամբ կառուցողական քայլեր չեն նախաձեռնի: Միաժամանակ, դիվանագետների և քաղաքական գործիչների շրջանում կարծիք կա, որ արձանագրությունների ներկա գործընթացի միակողմանի դադարեցումն էական վտանգներ է կրում և արդարացված չէ բանակցող որևէ կողմի համար, թեպետ ներկա ձևաչափը խանգարում է հարաբերությունների կարգավորման շուրջ հետագա բանակցությունների ծավալմանը: Հասարակական և քաղաքական գործիչների մեկ ուրիշ խումբ այլ կարծիք ունի, և համարում է, որ արձանագրությունների «դատապարտված» գործընթացի դադարեցումը և ձևաչափի «սև թուղթը» կնշանավորեն քաղաքական բանակցությունների նոր փուլի սկիզբ, որը, թերևս, քաղաքական շահարկումների պակաս ստորջրյա խութեր և հաջողության ավելի մեծ հնարավորություններ կունենա:

Իրավիճակն ընդհանուր առմամբ այսպիսին է. հարևան երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի ներկա փուլի գնահատականի վերաբերյալ մասնագետներն ու քաղաքական գործիչները համակարծիք են. արձանագրությունների վավերացման գործընթացը մտել է փակուղի՝ ժամանակավորապես կամ մեկընդմիշտ: Փակուղուց դուրս գալու ուղիների վերաբերյալ մոտեցումները տարբերվում են: Սակայն փակուղուց դուրս գալու անհրաժեշտությունն ընդունում են բոլորը: Ստեղծված իրավիճակից ելքեր փնտրելիս, թերևս, հարկավոր է հենվել հենց վերջին՝ դրական և բոլորի համար ընդունելի դրույթի վրա: Լուծում գտնելն այլընտրանք չունի:

Երկչափ խնդրի եռաչափ լուծումները

Ուրեմն ինչպիսին պիտի լինեն լուծումները ստեղծված պատային իրավիճակում, երբ միջպետական ցանկացած երկկողմ իրական նախաձեռնություն անհնար է ընկալվում նախքան արձանագրությունների վավերացումը, իսկ արձանագրությունների վավերացումն անհնար է ներքին և արտաքին քաղաքական գործընթացների արդյունքում: Ֆիզիկայում նման պատային իրավիճակների հանգուցալուծումը որոշակի տրամաբանություն ունի. երբ երկու մեծությունների հարաբերությունը և դրանց փոփոխման միջակայքն ի սկզբանե սահմանված են, հավասարումը լուծում չունի, սակայն խիստ անհրաժեշտ է, ապա այն փնտրում են նոր չափողականության մեջ: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի պարագայում նման մոտեցումը ենթադրում է երկու կողմերի համար ընդունելի երրորդ կողմի ներառում միջպետական պրակտիկ խնդիրներում և ենթակառուցվածքային ծրագրերում: Ակներևաբար, Ադրբեջանը նման կողմ լինել չի կարող, քանի որ այս կողմի ներկայությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում բացառապես ապակառուցողական գործոն է:

Քառակուսի հավասարման երրորդ արմատը

Երրորդ կողմի մասնակցությամբ ենթակառուցվածքային և համակարգային ծրագրերը հնարավոր են այն պարագայում, երբ համագործակցության հանրագումարային շահը գերազանցում է ձևավորված ստատուս քվոյի շրջանակներում առկա արգելքների քաղաքական շահը: Երկկողմ ձևաչափում սա

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

հնարավոր չէ, քանի որ Հայաստանի համար շահավետ յուրաքանչյուր տնտեսական կամ ենթակառուցվածքային պետական միջամտություն պահանջող ծրագիր Թուրքական իշխանությունները կասեցնում են օրորոցում. «ոչ մի թիզ հող թշնամուն» մոտեցումը գործում է անխափան: Պարզ է, որ տնտեսական որևէ օգուտ չի կարող հաղթահարել քաղաքական նման արգելքը:

Եռակողմ համագործակցության պարագայում շահերի ու շահարկումների քարտեզն այլ է: Արդյունքում արդեն իսկ հնարավոր են դարձել, ասենք, Վրաստանի տարածքով Հայաստան-Թուրքիա հեռահաղորդակցության ու բեռնափոխադրումների համակարգերի համակցումը, ֆինանսական ենթակառուցվածքների գործակցությունը և այլ ենթակառուցվածքային համագործակցության իրողություններ: Հենց նման ենթակառուցվածքային ծրագրերն են, որ հեռանկարում կրում են երկկողմ համագործակցության առավել մեծ ներուժ՝ համեմատաբար փոքր միջամտության պարագայում: Միջպետական հարաբերությունների սառույցը ճաքելու է համագործակցության հենց այս հատվածներում: Ուստի որքան ավելանան նման ծրագրերը, այնքան ավելի մեծ և ակնառու կլինեն հարաբերությունների քաղաքական կարգավորման պտուղները: Իսկ նման համագործակցային ծրագրերի ներուժը մեծ է, ասենք՝ մաքսային կարգավորման ոլորտում, էներգետիկ համակարգերի ինտեգրման ուղղությամբ և այլն:

Նման համագործակցության յուրաքանչյուր գաղափար ունի աջակիցներ և ընդդիմախոսներ: Այսպես, մի շարք փորձագետների կարծիքով այն պնդումը, որ Թուրքիան ունի էլեկտրաէներգիայի մեծ կարիք և Հայաստանի էներգետիկ հզորությունների մեծացումը արդարացված է հետագա համագործակցության ակնկալիքներով, իրականում թակարդ է: Ավելին, շատերը այն համարում են կանխամտածված խայծ: Փորձագետների և քաղաքական գործիչների մեկ այլ խումբ համարում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև էներգետիկ համագործակցությունն անխուսափելի է և մեծ ներուժ է կրում ոչ միայն երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման, այլև տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդման գործում: Ընդ որում, եթե հոռետեսների փաստարկները սահմանափակվում են հիմնականում մեկ կողմի՝ Թուրքիայի, քաղաքական շահերի ու գերակայությունների սեփական ընկալմամբ, ապա լավատեսների փաստարկները հիմնվում են երրորդ կողմի շահերի առկայությամբ և գործընթացների վրա ազդելու ցանկությամբ ու հնարավորություններով: Նման փաստարկներ կարելի է բերել քաղաքականապես ընդունելի յուրաքանչյուր եռակողմ նախաձեռնության համար: Դրանք անհրաժեշտ է կշռել և քննարկել ամենայն մանրամասնությամբ և պատասխանատվությամբ: Ամեն դեպքում լուծումը հարկ է փնտրել հենց երրորդ չափողականության մեջ և շարունակել գործել նախաձեռնողաբար:

Համառոտագիրը մշակվել է 2011թ-ի հունվարի 25-ին կայացած՝ «Հայ-թուրքական հարաբերություններ. հնարավորության պատուհանները» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Աջակցություն հայ-թուրքական հարաբերությունների մերձեցմանը» ծրագրի շրջանակներում: